ԴԵՐԱՍԱՆ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՀԸ

«Մեռնել-քնել»
Համլետ

Ոգևորողն ընկավ արդեն,
Եվ լռեցին նորա հետ
Սիրո տանջանք, զայրույթ ու քեն –
Լիր, Օթելլո և Համլետ։

Մեռավ – քնեց, հանգստացավ.
Որպես աղմուկ կենդանության,
Մեռելության միջից անցավ
Եվ չքացավ հավիտյան։

Էլ չի լսվիլ նորա ձայնը
Իմաստներով ոգեշունչ,
Հավերժացավ աստվածայինը,
Մնաց դիակն անմռունչ։

Եվ կըհանգչի լուռ և անշարժ
Դերասանը քարի տակ,
Բայց կպատմի քարն ապառաժ
Մրրկալից հիշատակ։

Եվ այցելուն պիտի կանգնե
Շիրմի առջև փառագոչ,
Սրտի խորքից բացականչե
Ձայնով հպարտ ու դողդոջ –
«Ոսկերացդ հանգիստ,
Աննման արտիստ»։